

6767



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«18» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 088 - 24

Ձեռնարկող՝

«ՔՐԱՇՔԱԹ» ՍՊԸ

ք.Երևան, Կոմիտասի պող. 59/7 շենք, 71 բնակ.

Գործունեությունը՝

Կոտայքի մարզի Բալախովիտի բազալտի
հանքավայրի «Արևելյան» տեղամասում կատարվելիք
երկրաբանական ուսումնասիրություն

Կոտայքի մարզ

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

հերթական համարը		
	X	Y
1.	4456736.0000	8467245.9631
2.	4456584.7046	8467414.5227
3.	4456326.7683	8467596.5578
4.	4456173.9785	8467758.6018
5.	4455778.1144	8467549.4426
6.	4455910.8150	8467341.0459
7.	4455972.0251	8467086.1066
8.	4456069.9739	8467282.6801

հերթական համարը		
	X	Y
9.	4456145.1600	8467349.5100
10.	4456258.5702	8467306.5459
11.	4456269.9760	8467447.8573
12.	4456434.1743	8467389.8280
13.	4456423.7869	8467281.4241
14.	4456636.8049	8467179.9235
1.	4456736.0000	8467243.5655

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մերկացման և փորձնական բացահանքի անցման, սյունակային հորատման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 112-96 մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել մինչև 95 մետր խորության 20 հորատանցք 1038 մետր ընդհանուր ծավալով, 80-85% հորատահանուկի նվազագույն ելքով: Հորատանցքերի խորությունները որոշելիս հաշվի են առնվել տեղամասին հարող այլ հանքավայրերի երկրաբանական տվյալները: Հորատվող ապարները համապատասխանում են III, IV, V և IX կարգերին:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում – 1038զծ.մ,
- փորձնական բացահանք - 30.0 զծ.մ:


Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատանցքերը նմուշարկել ընդհատվող տիրույթներով, որի դեպքում հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը կլինի մինչև 5 մ, հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 100 նմուշ,
- կատարել փորձնական արդյունահանում բացահանքից – 150խ.մ:

Փորձնական բացահանքի արդյունահանման աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման աշխատանքների, հորատասեպային եղանակով, օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր:

Քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 5 նմուշ, քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով՝ 5 նմուշ:



Կկազմվի նաև փուլտա շերտից 1 համախառը նմուշ՝ հողմահարված ապարները որպես շինարարական ավազ և խիճ ուսումնասիրելու համար:

Օգտակար հանածոյի քիմիական կազմը կորոշվի ըստ 5 նմուշների անալիզի: Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 100 հորատհանուկային նմուշներով: Հորատհանուկային նմուշներից 60-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 40-ը՝ կրճատ:

Քարաբանական և միներալոգիական ուսումնասիրությունները կկատարվեն 5 հղկուկների միջոցով:

Ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններն ուսումնասիրելու, ինչպես նաև հետագա արդյունահանման տեխնիկատնտեսական հաշվարկների համար ելակետային տվյալներ ստանալու նպատակով լաբորատոր հետազոտման կենթարկվի փորձնական բացահանքից արդյունահանված քարաբանական նյութը, ինչի հիման վրա կորոշվի լեռնային զանգվածից բլոկների ելքը, բլոկներից երեսապատման սալերի ելքը: Փորձնական հանույթից առաջացած թափոնները և փուլտա շերտի առաջացումները կենթարկվեն փորձարկումների որպես շինարարական խիճ և ավազ, դրանց պիտանելությունը պարզաբանելու նպատակով:

Քիմիական կազմի լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումները նախատեսվում են կատարել մասնագիտացված լաբորատորիայում:

Երկրաբանահետախուզական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ փորձնական հանույթի և հորատանցքերի անցման ընթացքում:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ռադիոմետրիական չափումներ հանքավայրի ամբողջ տարածքում՝ ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի ռելիեֆը՝ հորատման հարթակներ կառուցվելու են 15 հորատանցքերի համար: Հարթակների չափերն ընդունվում են 5x7 մ: Հարթակների տարածքից հեռացվելու է շուրջ 183.75 մ³ հողաբուսական շերտ և 1310 մ³ դեյուվիալ փուխր-բեկորային առաջացումներ (կավավազներ տուֆերի և բազալտների տարաչափ բեկորներով):

Աշխատանքների ժամանակ օգտագործվելու են արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջան ճանապարհները, նախագծով նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են: Մոտակա Գետառ գետը գտնվում է հայցվող տարածքից մոտ 1.6 կմ հեռավորությունների վրա:

Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են անմիջապես աշխատանքների ավարտից հետո: Ռեկուլտիվացված տարածքներում կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք: Վերականգնման ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 585 մ² այդ թվում 525 մ² հորատման հրապարակներ և 60մ² փորձնական բացահանքի մակերես: Ռեկուլտիվացիայի աշխատանքների կատարման համար կհատկացվի 1428.4. հազ. ՀՀ դրամ:



Ըստ ներկայացված հայտի հայցվող տեղամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ (արգելոց, ազգային պարկ, արգելավայր և այլն), որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանությունն չկան, բնության հուշարձաններ հաշվառված չեն: Հայցվող տարածքում չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի կամ կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում, ինչը կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր: Աղբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ նախատեսվում է կնքել պայմանագիր:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Աշխատանքների իրականացման ընթացքում փոշենստեցման նպատակով տեղամասի ճանապարհի երկայնքով կատարվելու է ջրցան, հորատման հարթակների և փորձնական բացահանքի սահմաններում: Հորատումը կկատարվի հատուկ լուծույթների կիրառմամբ՝ փոշեգոյացումը նվազեցնելու/կրճատելու համար:
- Հորատման մաշված թագիկների կառավարում (հավաքում, տեղափոխում, հետագայում հանձնում որպես մետաղի ջարդոն), որն իրականացվելու է հորատման ծառայություններ իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, դատարկված փոսը նախատեսվում է լցնել քարերով:
- Խախտված լանդշաֆտի վերականգնում:

Բալախովիտի բազալտի հանքավայրի Արևելյան տեղամասի տարածքում ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդում փոշու և ծխագազերի մոնիթորինգ՝ շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ:
- Հողային ծածկույթի աղտոտվածության (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր) մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:
- Վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների (ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան) մշտադիտարկումներ տարեկան մեկ անգամ:
- Աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ Մայակովսկի գյուղի մոտ, տարեկան մեկ անգամ:

Երևակման տարածքում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար ընկերությունը նախատեսել է տարեկան 590.0հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում



անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Անհրաժեշտ է ապահովել ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:


- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ



«ՔՐԱՇՔԱԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Բալախովիտի բազալտի հանքավայրի «Արևելյան» տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Հովիկ Մեսրոպյան